ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2026 թվականի N 1170-Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը, 25-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) հաշվեկշռում հաշվառված, 174,296,559.67 դրամ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ մարզ Լոռի, համայնք Սպիտակ, քաղաք Սպիտակ, Ա. Խնկոյան փողոց 134 շենք հասցեում գտնվող 3150.46 քառ. մետր մակերեսով բազմաբնակարան բնակելի շենքի համապատասխան բնակարանները, 14.93 քառ. մետր մակերեսով հարթակը ու դրանց օգտագործման և սպասարկման համար հատկացված 0.34471 հեկտար մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16052026-06-0013 վկայական, այսուհետ՝ գույք) հողամասը նվիրաբերել՝ նույն հասցեում

երկրաշարժից հետո կառուցված փայտյա, անբավարար տեխնիկական վիճակում գտնվելու հետևանքով քանդված, թվով 2 հանրակացարանային նախկին շենքերում բնակվող անձանց՝ համաձայն NN 1, 2 հավելվածների, համապատասխանաբար սեփականության իրավունքով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, հողամասը և հարթակը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով:

2. Սույն որոշման NN 1, 2 հավելվածներում ներառված բնակարանների նվիրաբերության գործընթացի ավարտից հետո՝ գույքի մնացորդն ամրացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) անհատույց օգտագործման իրավունքով՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ:

3. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում սույն որոշման N 1 հավելվածում ներառված քաղաքացիների հետ կնքել բնակարանների նվիրաբերության պայմանագրեր՝ հիմք ընդունելով սույն որոշման N 2 հավելվածում ներառված հատակագծերը և որակավորում ունեցող անձի կողմից կազմված փաստաթղթերում ներառված մակերեսները.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում կազմակերպության հետ իրականացնել գույքի մնացորդի հանձնման-ընդունման աշխատանքները.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել գույքի մնացորդի անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են կազմակերպության միջոցների հաշվին.

4) բնակարանների բաշխման (բնակարանների տեղադիրքը, հարկերի ընտրությունը) գործընթացը կազմակերպել վիճակահանության արդյունքների հիման վրա:

4. Սահմանել, որ սույն որոշմամբ՝

1) նվիրաբերված բնակարանները չեն կարող օտարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 10 տարվա ընթացքում.

2) նվիրաբերության պայմանագիր կարող է կնքվել N 1 հավելվածում ներառված այն անձանց հետ, ովքեր սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող երեսունվեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվել են 183 և ավելի օր:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում կոմիտեին տրամադրել՝ սույն որոշման N 1 հավելվածում ներառված անձանց՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող երեսունվեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում 183 և ավելի օր փաստացի գտնվելու վերաբերյալ տվյալները:

6. Սահմանել, որ նվիրաբերության պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման և պայմանագրերի նոտարական վավերացման ծախսերը ենթակա են իրականացման նվիրառուների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

10.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ